

ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 8 Ժր.  
Վեցամսեայ 4 Ժր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան 10 Ժր.  
Վեցամսեայ 5 Ժր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. Տօլ.  
Վեցամսեայ 1. Տօլ.

ԿԱՆԻՍԻԿ

ԽԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ  
20 ՍԵՂ.



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐ ՔԱՂԱՔՍԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՇԱՐԱԹ ՕՐԵՐ

ՀԱՍՑԷ

Rédaction du Journal

„Iraounk“

Varna

Редакция на

Вѣстникъ

„Иравункъ“

Варна

Գրոշքիւնք եւս չեն տրոշիր

rev. Père G. Kalemkérian Michitaris  
tengasce № 4  
Vienne

ՎԵՅ. ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ՄԱՀՈՒԱՆ ՇՈՒՐՋ

Թե ո՞րոնք էին պատմաբանները  
վեհ. Իզմիրյանի վախճան մա-  
հոնան

Երբ հեռագիրը գուցե չորսին  
Ս. Օժոթեան յանկարծական մահի  
անախի կապակց մը ծնա մեր  
մտքին մէջ, զոր արտայայտեցինք  
երկու բառով մեր սգալիկ թի-  
ւին մէջ. Այս հետզհետէ հասնող  
մանրամասնութիւնները կը հաս-  
տատեն թէ մեր այդ կասկածը  
բոլորովին անտեղի չէր:

Ոչ ապա որ այս ու այն կողմէ  
փութան հաստատել թէ հոգեւոր  
Հայրապետին առողջութիւնը ար-  
դէն խանգարուած էր, բայց ոչ  
որ չի կրցաւ ժխտել թէ արտա-  
կարգ յուզումներ փութացուցին  
Անոր մահը. Այս իսկ պատճառաւ  
էջմիտին հաւարող պատուիրակ-  
ները ինքզինքնին պարտւոր  
զգացին քննելու այն մահաւեր  
յուզմանց առիթները. Հանգուցե-  
լոյն թաղումէն յետոյ հաւաքմա-  
րուած պատուիրակներու ժողովին  
մէջ արտասանուած արձանագա-  
թիւն երբ, քննութիւնները ու  
բացատրութիւնները բաւական յո-  
տով յայտարարուեցին Ս. Հայ-  
րապետին վաղաժամ մահուան  
պատճառ եղողներու սեւ դէմքե-  
լուն վրայ:

Այդ ժողովին մէջ ամբաստան  
ուեցան Արքեպիսկոպոսի առաջ-  
նորդ. Կարապետ եպիսկոպոսը,  
կղերականաց Հովիտի թեմի  
միաբաններու մէկ մասը. Գլխակ  
հոգեւորական թերթերը և  
ի վերջոյ նոյն կուսակցութեան  
կողմէ ծիգիսէն էջմիտին շըր-  
կուած մէկը՝ Կաթողիկոսը յայտարար-  
ման եւրոպայացիները:

Մենք հոս պիտի գտնենք քաղ-  
ուածներ Պապի Պատրիարքար-  
անին կողմէ էջմիտին շըրկուած  
պատուիրակին գրածներէն որոնք  
Մշակի մէջ երեւցան:

Էջմիտին 20 Դեկտ.

(Պատուիրակներու ժողովին մէջ)  
Անցնելով վերջին և ամենից հրատապ  
հարցին, այն է Կաթողիկոսի վերջին  
օրերին կրած յուզմանքների հարցին,  
քողովը առաջարկեց նրանց, որոնք

արծարծել էին այդ հարցը, բացատրել  
իրանց առաջարկների էությունը:

Ամենից առաջ խօսեց Էջմիտ. Արքե-  
պիսկոպոսը. Նա յայտնեց այն միտքը, որ  
մամուլի և հասարակութեան մէջ լու-  
րեր երեւցին և պատու մեծ է հա-  
գուցեալ Կաթողիկոսի կեանքը թու-  
նաւորված էր և դառնացած հայ մա-  
մուլի մի օրգանի «Հովիտ» և այս  
նրան փոխարինող «Հովիտ» թերթի  
անասն և անարդար լարձակումներով,  
իսկ հիւանդութիւնից տուաւ մի միջա-  
դէպ, որ անգի է ունեցել նրա և Կա-  
թողիկոսի եպիսկոպոսի մէջ լցրել է դառ-  
նութեան բաժակը, եպիսկոպոսը որ-  
պէս թէ կոպիտ վարմունք ունեցել Կա-  
թողիկոսի դէմ, անցել է կարգապա-  
հութեան սահմանը, կաթողիկոսի հի-  
ւանդութիւնը սնանկացել է: Նա, Վ.  
Արքեպիսկոպոսը դրականապէս չէ մեղադ-  
րում Կարապետ եպիսկոպոսին, այլ ո-  
րովհետեւ հասարակական խղճը վերջով  
վաճ է, որովհետեւ զանազան հիշատակ-  
ներ են պատու, ուստի անհրա-  
ժեշտ է գտնուի, որ այդ ամենը քննվի  
ստուգվի և ճշմարտութիւնը երևան  
հանվի: Ոչ պէտք է հասարակութեան  
վերջովս խղճմունքն ևս հանգստա-  
նայ: Պէտք է մենք այստեղ ցոյց տանք  
մեր վերաբերմունքը դէպի այդ թեր-  
թը և այն անձինք, որոնք վշտացրել  
են ծերունի Հայրապետին, պէտք է մեր  
ղայրոյթը արտայայտենք:

Անկէ յետոյ խօսեցաւ դաշնակցու-  
թեան Կովկասի թերթին խմբագիրը,  
և ըսաւ թէ այդ հարցը մենք արծա-  
ծեցինք. «Ժողովուրդը արդէն խօսում  
է այդ մասին, և երբ հիշատակ մեկ-  
նութիւններ է տալիս մեղադրանքը  
արդէն համատարած է»:

Այնուհետեւ խօսեց Ս. Տրքանեան,  
յայտնելով այն միտքը, որ խնդիրը մի  
կարապետ եպիսկոպոսի կամ մամուլի  
որոշ օրգանի մասին չէ, այլ խնդիրը  
մի ամբողջ բնութիւն մասին է, որ ար-  
բում է էջմիտին, մի բնութիւն, որ  
մահացրեց հանգուցեալ Կաթողիկո-  
սին:

Սակայն ժողովականներից շատերը  
պահանջեցին, որ կողմէն անկողնու-  
թիւն լինի մեղադրանքի ցաւ յայտնե-  
ցին, որ «Հօրիզոնը» իր մեղադրանք-  
ները հիմնել է անհիշատակ, լուրերի  
չլուրերի վրա և փոխանակ նախապէս  
ստուգելու իրողութիւնը. ապա ցոյց-  
ներ անեց բերելու, խնդիրը արծա-  
ծել է, թեթեամբ վերաբերմունք  
ցոյց տալով դէպի հարցը:

Խմբագիր Թումանեան նորից խօսելով  
յայտնեց, որ «Հօրիզոնը» ունեցել է  
դժուրամտութիւն, այս Կարապետ եպիսկո-  
պոսի Կաթողիկոսին տուած հրաժարա-  
կանն էր, որից երեւում է, որ նա Կա-  
թողիկոսին մեղադրում է նոյն անբա-

րեխտութեան մէջ:

— Դէ տուէք այդ դժուրամտութիւնը, կար-  
գացէք, այն փամանակ ամեն բան կը  
պարզվի ազատակեցին ամեն կողմից:  
Սակայն ոչ ոք երևան չը հանեց այդ  
դժուրամտութիւնը:

Ապա խօսեց է առնում Հ. Առաքել-  
եան, որ առում է մօտաւորապէս հե-  
տեւեալը.

«Այստեղ դրված է երկու հարց. առա-  
ջինը քննել մամուլի մի օրգանի, այն  
է «Հովիտ» — «Հովիտ» թերթի վարմուն-  
քը, զայրոյթ և դատապարտութիւն  
յայտնել նրան իր կծու. խիստ և ան-  
պատկառ. քննադատութեան համար,  
ուղղված հանգուցեալ Կաթողիկոսի  
գործունէութեան դէմ. երկրորդը քննել  
էջմիտին միաբան Կարապետ եպիս-  
կոպոսի վարմունքը, եւ թոյլ եմ տա-  
լիս ինձ իմ բարեկամ Վ. Արքեպիսկո-  
պոսին առաջարկել դէմ խօսել տուալին հարցի  
վերաբերմամբ և բողոքել այդ կերպով  
ձեւակերպված հարցի դէմ: Պէտք է բո-  
ղոքեմ յանուն մամուլի ազատութեան  
մեծ զաւակարի, պէտք է բողոքեմ  
մանաւանդ, որ միւս ճառարանները  
անկողնու չեն, երբ դնում են այդպիսի  
հարց և թեւադրում են միայնկուսակ-  
ցական դժուր շահերով: Ոչ ոք ձեւա-  
նից, պարանքի, չէ կարող ասել, որ  
որեւէ բարեպաշտ կամ զգացմունքներ  
եւ տաժում դէպի «Հովիտ» կամ «Հո-  
վիտ» թերթը. դուք գիտէք չափ լաւ,  
որ ոչ մի թերթ այնքան հայրոյթի  
յօդուածներ չէ տպել ոչ ոքի դէմ, որ-  
քան իմ դէմ, բայց այնու ամենայնու  
եւ ինքս՝ իբրեւ մամուլի գործը, իբրեւ  
գրքի գլխաւոր, իբրեւ խմբագիր երբեք  
չեմ կարող թող տալ, որ մենք այսօր  
այստեղ մամուլի ցնդորը դեր  
կատարենք, որ մենք քննադատենք  
մամուլի մի օրգան և նրան դատա-  
պարտենք իր քննադատութեան հա-  
մար, եւ չեմ կարող թող տալ յանուն  
մամուլի ազատութեան զաւակարի,  
թող ընթերցող հասարակութիւնն ինքն  
իր վերաբերմունքը ցոյց տալ այս կամ  
այն օրգանին. մենք ամենեւին կողմ  
չենք ցոյցուրա սահմանելու երկրորդ  
«Հովիտ» «Հովիտին» զայրոյթը քուէ  
տալու առաջարկը եւ անկողնու չեմ գա-  
նում անկողնու չեմ գտնում անա ին-  
չու, պարանքի, եթէ մեր խղճը վեր-  
ջովս է և դուք արդար զայրոյթ էք  
գրում, որովհետեւ մի կղերականութիւն  
թոյլ է տուել իրան կծու և անհար-  
ակ քննադատելու մամուլին Հայոց Կա-  
թողիկոս իզմիրյանին, հապա քննու-  
ման խղճը չէր վերջովս և դուք  
արդար զայրոյթ էք գրում յայտնում, երբ  
ուրիշ թերթեր, այն է Կ. Պապի «Աղա-  
տամարտը» և Ամերիկայի «Հայրենիք»  
և «Ասպարէզ» թերթերը, Թաւրիզի  
«Առաւօտը», ամենախոյտառակ և սրի-  
կայական ոճերով քննադատում էին

նոյն իզմիրյանին, անուանելով նրան  
«խելիքան», «մանիք», «աւանան», «ա-  
շաւամ» և այլ անվանումներով, վերադա-  
րված այդպիսի սանձարձակ և անպատ-  
կառ քննադատութիւնից, յուսահատ  
որոշում էր նոյն իսկ հրաժարվել դա-  
նից: 2-է, պարանքի, դուք անկողնու  
չէք, անկողնու չէք, որովհետեւ այն փա-  
մանակ դուք պէտք է առաջարկէք այս  
ժողովին զայրոյթի, նողկանքի քուէ  
տալ և այդ թերթերին իսկ չէ որ դուք  
այդ չէք կամենալ յանուն մամուլի ա-  
զատութեան զաւակարի: Ուրեմն այդ  
զաւակարը գործադրեցէք և «Հովիտ»  
վերաբերմամբ: Ուրեմն այստեղ խօսք  
լինել չէ կարող մամուլի այս կամ այն  
օրգանի դատապարտութեան մասին,  
նախդրում եմ. ժողովը նախ որոշէ այս  
հարցը, ապա եւ կանցնի երկրորդ  
հարցին»:

Ժողովը գրեթէ միաձայն որոշում է  
հանել օրակարգից այդ հարցը  
իսկ Կարապետ եպիսկոպոսի խնդ-  
րոյն վերադառնալով, ի մէջ այլոց Արքե-  
պիսկ վարդապետ ցաւալի մերկացում  
ներ ըրաւ «որոնք ժողովին վրայ սառ-  
տիկ ճնշող տպաւորութիւն գործեցին:  
Դուք, ըսաւ, այստեղ մեղադրում էք  
միայն Կարապետ եպիսկոպոսին, ինչիկ  
վարդապետին՝ քննեցէք լաւ և կը տես-  
նէք որ կան շատ ուրիշներ որոնք շա-  
րունակ վիրտ էին պատճառում ծերու-  
նի Հայրապետին»:

Երկար թեր և դէմ վերաբանութիւն-  
ներից յետոյ ժողովը որոշեց և ընտրեց  
երեք հոգուց բաղկացած մի մասնաժո-  
ղով, որին եւ յանձնեց ձեռք բերել  
Կարապետ եպիսկոպոսի հրաժարականի  
պատճէնը և վերադառնալ յայտնող օրը  
քողովին, ինչպէս և ստուգել Արտա-  
ղի վրայ մերկացումները:

Այսօր, դեկտ. 20-ին, ժամը 11-ին  
պատգամաւորներից շատերս արդէն  
մեկնեցինք էջմիտին:

Հասնելով Թիֆլիս, իմացանք, որ  
պատգամաւորների մի մասը մնացել է,  
շարունակել ժողովը, իսկ է մասնա-  
ժողովի գեկուցումը, կարգացել Կարա-  
պետ եպիսկոպոսի հրաժարականի պատ-  
ճէնը, ստանալով իրանից. եւ գտել է,  
որ 1) այդ գրութիւնը ըստ ոճի և  
կարգադրական տեսակէտի անխոյա-  
տելի է, 2) պախարակելի է եւ էջմի-  
տին միաբանութեան մեծագոյն մասի  
վարմունքը՝ հանդէպ հանգուցեալ Կա-  
թողիկոսին:

Յանկայի է. որ մասնաժողովը ինքը  
հարգութեւ հասարակութեան կայացածը  
որոշման բնագիրը:

Պէտք է ասենք, որ ժողովը շատ  
ծանր տպաւորութիւն թողեց բոլոր  
պատգամաւորների վրայ:

Կարեւոր եւ համարում իմ կողմից

և. մի մերկայումս անկողնի վրա (\*). Միայնակ  
նստած մի շատ յարգելի անդամ  
յայտնեց ինչ և մի քանի պատգամա-  
ւորներ, որ կարողանալու էին պատգամ  
մը պահպանել իրենց համար, և այս-  
րակերպ ստանալով իրենց համարը  
է պատգամը մի անգամ, որ եկած է և  
զեղ թիֆլիսից յատկապես կաթողիկո-  
սին զգուշացնելու յայտնելու մի խմ-  
ակի կողմից: Այդ միջոցը տուեց և  
եկողի առեւեր, բայց եւ ինքնուր  
որ նա ինքն չանդէս գայ իր մերկա-  
ցումով և փառանքով:

Հ. Ա.

(\*) Մ. Խմբ. Ուշադրութիւն ըրէ՛ք:

Թ. Ղ. Թ. Ա. Կ. Յ. Ո. Ի. Թ. Ի. Ն.

Ռոստով 8 Յունուար 1911

Տէր Խմբագիր

«Իրաւունք»ի 44 թիւին մէջ Ռոստ-  
ովի գրութիւն 14 շնորհ. թուականա-  
նամակ մը հրատարակած էիք, նամա-  
կագիրը ցու յայտնելով ձեռնառ իշ-  
խանութեան պաշտօնական նոր դիմոյ-  
ցին նկատմամբ որ կը պահանջէր Օտա-  
րանպատակ ուսուցիչներու իւրաքանչիւր  
տարեւոր յայ վարժարան ներքին անար-  
կի կտակած մը կը զրտորէր, իբր թէ  
ներքին մատ մը եկած ըլլայ կրթական  
տեսչին առ յանդարձական գործիւն-  
մըն մէջ, ինչ որ եւ նախնական չեմ  
գտնիր:

Խմբագրութիւնը վեր յիշելով Յ տարր  
յառաջ Վատնայի կրթ. Տեսչին նոյն  
օրինակ պահանջը, բացառած էր թէ  
ինչպէս Օրմանեան Պատրիարքի պատ-  
շահաւոր գիմումին ձեռնադրով Պոլսի  
կրթական նախարարութիւնը բարեհաճ  
կարգադրութեամբ մը խնդիրը լուծած  
էր պայմանագրական ձեռք մը տակ և  
այն օրէն ուստի ոչ-պարտաւորապէս  
ինչ ուսուցիչներ պարտաւորապէս Վ. Թ-  
թարաններու մէջ արտօնուեցան ըստ  
յառաջնոյն պաշտօնավարել: Ասիկայ  
արդէն ինքնին ցոյց կուտայ թէ օրէն-  
քը գոյություն ունէր բայց ժամանա-  
կաւոր կերպով խնդիրը մոռնալ տակ  
պահուած էր մերձաւոր արագացում  
կրկին երեւան գալու պայմանաւ:

Իմ կարծիքով, ոչ կամ կանուխ գոր-  
ծադրուելու վերապահուած պետական  
օրէնք մը մերկայանալու կողմանէ ըլլալիք  
զրգուշանալ պէտք է ունենայ: Սրբարեւ  
մեր պատշաճութեամբ Պոլսի կար. էք-  
զարբարանին մէջ եւ բարձր յարգե-  
րութիւն մը կարող է ժամանակի մը  
համար խնդիրը յետաձգել մեզի ի նը-  
պաստ բայց այդ գեւ չնշանակիր թէ  
պատրիարքական զիմում մը կրնայ  
մշտնջենապէս չեղածացունել խոր-  
գործանքին վաւերացում օրէնքի մը սրտ  
արամագրութիւնը, նոյն իսկ թիւրք  
կառավարութեան մօտ պատրիարքա-  
կան գլխաւորները մինչև հիմայ ինքն  
ժամանակի համար կրցած են արդիւնք  
մ'ապահովել, ըլլայ չէն ըլլայ սա նոր  
ըսուած սահմանադրական, բէթիմի օ-  
րով: Հիւանդանոցներու պարէնը նա-  
խորդ Սուլթաններու պարտիքը նը-  
ւերադարձուած նոյն իսկ համարի օ-  
րով է հրկայցուել պետական գանձէն մա-  
տակարարել, գուցէ քրիստոնեայ  
ատարը կերպով իմն սիրաշունչութեւ  
զաքաւ տու թիւմը իսկ նոր բէթիմը  
փոքր Սահմանադրութեան որդին և  
հիւանդանոցներու հոգին հոգի և մի  
պատշաճութեամբ մը ինչպէս, զայն իր  
հաստատուած չներու կրկնային մէջ:  
Ի հարկէ այս չնկան կարգադրու-  
թեան զեմ պատրիարքական գլխաւոր,  
նոյն իսկ բողոք տեղի ունեցու բայց  
հաղիւ առջի տրուածին կէտը եւ դար-

ձուեցաւ:

Առով ըսեմ չեմ ուզիր սակայն թէ  
ճիշդութեամբ միշտ ապարդիւն կը մընա-  
կ պէտք է գիմում ընել. բնականա-  
ապարդիւն է աշխատելու ձեռնառ  
իշխանութեանց մօտ լսելի ընելու մեր  
աղերսաւոր ձայնը, բայց երբէք թոյլ  
չի տանք մենք մէզի, եւնիպարութեւ  
թէ մերկայանալու գործումս է որ կը  
քալէ կառավարութիւնը իր գծած ու-  
ղիւն նա այնքան որոշ է և մեկին որ  
պէտք է իմար կոյրերու առաջնորդու-  
թեան Մենք սակայն պէտք է բանաւոր  
մեր աչքերը տեսնալու համար թէ օր  
ուզին է որ պիտի կրնայ մեզ ազատել  
օրըստօրէական վաթարացու մէ և ան-  
խուսափելի կորուստէ:

Նամակագրին յայտնած կատակը  
հոս երբեք մարդկանց կողմանէ սխալ  
մեկնուելով լաւ տպաւորութիւն չէ  
ըրած:

Ինչպէս նաեւ այդ նամակին հետ  
ալ խմբագրական տեսութեան սա կը-  
սորը վերաբերիչ նկատուած է ծանօթ  
ազգայիններէ: «Ռոստով»ի համար  
այս կատակը ունենալ ծանր թոյլ չի  
թիւր քանի որ գեւ թարմ է թաղական  
խորհրդայն ընտրութեան համար կառա-  
վարութեան իշխանութիւնը հրաւի-  
րելու վաթ քալը զոր տեղին հոս կարգ  
մէ մարդիկ: Եւ այդ պարբերութեան  
մէջ այս կամ այն առիթով կամ ար-  
գի թաղական խորհրդայն անդամներուն  
ո'ւնէ մեկին հասցէին արձակուած վի-  
րաւորիչ բառ մը չի կարողացալ գըտ-  
նել թէ և, բայց իբր «Իրաւունք»ի մէկ  
վաղեմի բարեկամը պիտի խնդրէր որ  
յաջորդը համարով ի թուումս յուզ-  
ուած մտքերու լուսաբանութեւ սա կէ-  
տը թէ ո'ր է եղած արդեօք այն վաթ  
քալը զոր առած ըլլան կարգ մը  
մարդիկ թաղ. Խորհրդայն ընտրութեան  
միջոցին: Այդ մասին յարգուած անձ-  
նաւորութիւնը մը սա կարծիքը յայտ-  
նեց ինքն թէ «երկրին օրէնքը վաւե-  
րապէս չի նկատուել թաղականութեւն  
ընտրութիւնը և թէ կառավարական  
պաշտօնէր մը ներկայութեան չէ կա-  
տարուած և որով ետեւ եկեցեցին իր  
կառուածները ունի որոնց հասցիք գան-  
ձելու համար երբեք պատահական  
գլխաւորութեանց պարագային դատա-  
կան իշխանութեանց պաշտպանութեան  
գլխաւոր պէտք է ունենայ, ու եթէ վա-  
ւերական հանգամանքէ զուրկ լինի  
յայտ դատարանի թաղականութիւնը  
կրնայ օր մը իրեն վստահուած եկեղե-  
ցոյն շահերը վստահել, ուստի այս  
նկատումներէ առաջնորդուած հարկե-  
ցուցիչ կերպով պատկանալ իշխանու-  
թեանց զեկուցած էր ընտրութեան օրը  
և ժամը որպէսզի ընտրութեան օրի-  
նաւորութեան հսկող պաշտօնական ներ-  
կայ գտնուի:»

Եթէ այս է ակնարկուած քալը,  
պէտք է խոստովանել թէ «վատ» բառին  
կրրարկումը շատ անձաւ և անպատե-  
կերպիւ գործածուած է: Այսպիսի խոս-  
տովանութիւն մ'ընելով «Իրաւունք»  
իր ողջմտութեան ապացոյցը պիտի  
տրուած ըլլայ և ոչ թէ նախնայած պի-  
տի ըլլայ իրեն դէմ սարքակցել եւ  
թաղական պայքարի մը առաջ և ո-  
րով ետեւ նախ թէ հասարակութիւնը  
փորձով տեսած և համոզուած է ան-  
ցնելին մէջ թէ Ձեր թեքիմը խառնու-  
ցիլ մը սպաննելին անուր հրատարա-  
կած ըլլալուն համար անոր ազգական-  
ներուն թեքիմը թաղական տարանակ մը  
բաժանորդներ կործանուեցին վերջ  
այ կրցած է իր գոյութիւնը անվար-  
չահպանել, և երկրորդ թէ արդի թա-  
ղական խորհրդայն անդամներին և ոչ  
մէկէն կարելի չէ ոգտակ, նորընծայ  
ազաներու յատուկ այնպիսի ճգնիմ  
քիմանդութիւն մը. իմ կարծիքս այն

է թէ թաղականութեան պաշտօնը մեր  
մէջ անվար պաշտօն մ'ըլլալով զայն  
ստանձնելը ինքնին տեսակ մը անձնա-  
գոյութիւն ըսել է: Եւ անձնագոյու-  
թիւն մը պէտք է գնահատուի ժողո-  
վրդական յարգանքի արտայայտու-  
թեամբ: (\*)

\*\*\*

Հոգեւոր իզմըրեան Հարկի իող-  
հանգիստեան օրը տեղւոյս եկեղեցիին  
մէջ պատահած անխորժութեան մա-  
սին Ձեր խնդրած տեղեկութիւնը Ձեզ  
ժամանակին չի կրցի հաղորդել որով-  
հետեւ եղածը ինքնին անկարեւոր և չա-  
հեկանութեան զուրկ էր, բայց կրնար  
բաւական ծանր հանգամանք մը բա-  
տանալ եթէ թաղականներէ մի քանին  
փութկոտութիւն ցոյց չի տարին լը-  
նութեան դադարաւորութեւ «գիտակց-  
ներու» լեզունին պատկանող անգիտ-  
ակց երիտասարդն որ հր Երեւան  
գոց սորված դասը եկած էր ժողո-  
վրդին առջև թոյլութեւ, իզմըրեանի  
կենսագրականը ընելու ձեւին տակ,  
բաւ սրբաւ սրբ ըսելով դաշնակցու-  
թեան ուխտանալ կը կարգար օգտուե-  
լով ներկայ եղող սգաւոր ըզմու-  
թեան լսելու պատրաստակամութեւն:

Իրեն գրուած է եզեր թէ իզմըրեան  
երբ տակաւին աքորական երուսաղե-  
մու վաճառ մէջ, մշտական յարաբե-  
րութեան մէջ գտնուած է դաշնակցու-  
թեան կեդրոնին հետ (ապակեդրոն ? և  
կեդրոն ?) թէ շատ անգամ դաշնակ-  
ցութեան գործակալները անոր հա-  
ւանութեան արժանացած են և այլն  
եւայլն: Երբ կամաց կամաց կարգը ե-  
կերէ այն կէտին որ ըսէր պիտի գուցէ  
«ժողովուրդ ալ ինչ հարկ երկար բա-  
րակ գլուխը ցուցունեմ, իզմըրեան  
հայրիկը դաշնակցական էր (իբրեւ վիս-  
սեկալ) !!! Ընչոյ այն պահուն իր կա-  
չիւն մէջ գտնուած սեղմուած մի ինչ  
Հնչական որ երբեք կը պոսար «ով որ  
Հնչական չէ մարդ չէ, հայ չէ և այլն»  
մէկէն կրակ կտրած իր գոռ Ձայնը կը  
բարձրացունէ «վար առէք սա խէզը»  
ըսելով «Վրկի Վրկի սօքեր» տաճիկ-  
առածը լաւ կը յարմար իման պարա-  
գաներու համար պոռոտախօսներու  
դէմ պոռոտախօսներ պէտք է ուզան:  
Բայց ներուր ինչ ըսել թէ այդ պզտիկ  
միջադէպին պատասխանատուութեան  
մէջ կարեւոր բաժին մը կը ծանրանայ  
մեր յարգելի թաղականներուն վրայ,  
իզմըրեանի մեծութիւնը մօտէն ճան-  
ցողները կը վկայեն թէ անիկայ օրէն-  
քի մարդէն նա իր վերջին կողմակոյ  
իր գամքը յայտնած էր Դուրեան պա-  
տրիարքին և պահանջած է, որ եկե-  
ղեցիներու դռները իսպառ փակ մնան  
կրօնական հանգամանք չունեցող ա-  
տենախօսութեանց, միջիններու առ-  
ջև: Իզմըրեան հայրիկ իր այս կտրուկ  
հրամանը հանցուց Դուրեան սրբազա-  
նին ականջին ճիշտ այն օրերուն երբ  
այս վերջինը իր ժողովականներով կը  
տատանուէր անորոշութեանց մէջ:  
Պատրիարք Դուրեան եկեղեցականա-  
ցած իզմըրեան հայրիկի վճռականու-  
թեւն ի սկզբան առնական կորով մը  
ցոյց տուաւ պատալով Ծարիկեաններու  
երեսին, թէ ասիկայ իմ մեծաւորիս  
հրամանն է չեմ կրնար քուէր դնել  
ըսելով բայց յետոյ չ'ուշացաւ կնամար-  
դի ընթացքի մը հետեւելու, սփառեա-  
կան խմբակին աղեղնութեան երկար-  
կելով ինքզինք:

Նախ կը հարցունեմ իզմըրեանի ա-  
նուշ մարմինը դաշնակցական աւագա-  
նի մէջ մկրտել ուղղութեան թէ, եթէ  
իզմըրեան Ձեռնէ էր և կամ դուք ա-

(\*) Դիտ. Խմբ. Յաջորդ թուով կը  
խօսինք այդ մասին:

Նորը ինչու անասանցիք անոր հրա-  
մանին և ինչու աւելի յիմարական  
թափով մը, անոր կողմանէ վերջն ալ  
այնքան խաղաղութեան պատճառ եղաք  
և հայոցիցիք իսկ Անոր դէմ:

Իսկ պատ. Թաղական խորհրդայն պի-  
տի համարձակիմ հարցունել թէ իզմըր-  
եանի հոգեհանգստեան առթիւ, անոր  
յիշատակին ի պատիւ պէտք է չէր որ  
կարգադրութիւն մ'ընէիք, (ի' նկատի  
ունենալով ամեն անխորժ պատահա-  
կանութիւն) որպէսզի կրօնական արա-  
րողութիւններէ վերջ տաճարէն դուրս,  
եկեղեցիին գաւիթը կամ դպրոցին մէջ  
կատարուէին աշխարհական բանախօ-  
սութիւնները, որով իսկապէս մատու-  
ցած պիտի ըլլայինք հանգիստ հայրա-  
պետին մեր վերջին որդիական յար-  
գանքը, յարգելով իր արձակած հը-  
րամանը իսկ հոգեհանգստեան օրը: Ա-  
նիկա օրէնքի մարդն էր, անիկա մեծ  
մարդէր և խաթր չէր մնար:

Ղաւրիպ-Ղուրպիք

## Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Ազգին անձեռնմխելի դրամէն  
2000 ֆր. Թաղ. Խորհուրդը քա-  
շած ըլլալու պար հետզհետէ հաս-  
տատութիւն կը գտնէ. Թաղ. Խոր-  
հուրդը ինք լուս կը մնայ այս  
մասին, ինչ որ հաստատուել կը նը-  
շանակէ. Վեպութիւնը խոստովա-  
նութիւն է և կ'ըսէ ժողովրդական  
առածը:

Այդ անձեռնմխելի դրամին  
քաշուի ու ծախսուելը բնականա-  
նապէս Ազգ. սնտուկին հասցիթ-  
ներուն նուագած ըլլալուն հետեւ-  
անք է: Երեւոյթները և մեր ա-  
ռած տեղեկութիւնները կը հաս-  
տատեն թէ իսկապէս այն նուագած  
են հասցիները: Մենք այդ նա-  
խատեսած էինք տակէ մ 7 ախիս  
առաջ, երբ թաղականները ժողո-  
վուրդին մէկ կարեւոր մասին  
տրտունները արհամարհելով մի-  
այն իրենց նոյն յագուրդ տալ  
սկսան, Մենք այն ատեն ըսինք  
իրենց թէ այս Ազգ. հաստատու-  
թիւնները ժողովուրդը սիրաշա-  
հելով միայն կրնան մատակա-  
րարուիլ: Ժողովուրդին քէն ընել  
տալը պիտե՞ն իսկապէս, հե-  
տեւայէս քանդուած առաջ կը բե-  
րէ: Անիկովն սկալ ողով զեկուց-  
ուած այս տարրական ճշմարտու-  
թիւնը անխելի մնաց մեր թա-  
ղականներէն, և այսօր անա տը-  
խուր իրողութիւնը ծառացած է  
իրենց առջև, եկեղեցոյ հասցիթ-  
ները կ'ըսուած են, միջոցաւ ծախ-  
քերը իրենց տեղը կեցած և ան-  
տեսեալիտօրէն աւելցած իսկ  
են. Իրաց այս վիճակը եթէ շա-  
րունակէ 1-2 ասի ևս կամ այն  
է որ ազգին անձեռնմխելի դրամը  
ամբողջովին պիտի սպառի և կամ  
Ազգ. սնտուկը տասնեակ հազա-  
րաւոր ֆ. պարտքի տակ պիտի  
իյնայ:

Այս ցուտի իրողութեան առ-  
ջև լուս մնայ կամ զայն ժողո-  
վուրդէն ծածկել խելացութիւն  
չէ: Ընդհանապէս պէտք է որ

Թագ-Խորհուրդը իր ելևմուտքին օրուան վիճակը ժողովուրդին պարզե ժամ առաջ և անոր դարձանին վրայ խորհի ժողովուրդին հետ համախորհուրդ։ Բայց ժողովուրդը ըսելով պէտք չէ հասկնալ միայն այնպիսիները որոնց մէջմէկ գաւաթ խմցնելով քուէ չահիլ գիտցան. այլ աւելի ժողովրդեան այն մասը որ միշտ իր տուրքերովը ու խաւարներովը չէն է պահել եկեղեցին ու վարժարանը։

Կանգնողներն արդէն այս կարևոր խնդրոյն։

### ՆՈՐ ՕՐԻՆ ԱԳԻԾ

ՀԱՅՐԵՆԻԻ ՎԵՐԱԿԱՐԳՈՂ ՀԱՅՈՑ

ՀՈՂԱՅԻՆ ԽՆԴՐՈՅՆ ՄԱՍԻՆ

Պետական Խորհուրդը կ'ուսումնասիրեց հետեւեալ օրինակները որ կ'վերաբերի 324 Յուլիս 10էն առաջ օտար երկիր գացած և այժմ հայրենիք դառնալ օգտ. հպատակներուն հողային և կալուածական խնդիրներուն։

Յօդ. 1.—Անոնք որ 324 յուլիս 10էն առաջ օտար երկիր գացած և այժմ վերադառնալ ուզած են, երեք կարգի կ'բաժնուին. Ա. կարգին մէջ են անոնք որ մեկուկուս ասեն, ըստ պետական այն ատենուան որոշումին, մուրհակ տալով թողած են Օ.մ. հպատակութիւնը և իրենց անունը չընկած է պետութեան տոմարէն, ասոնք են թակալ են օրինական ընդհ. տրամադրութեան Բ. կարգին մէջ են անոնք որ ըստ օրինի առանց Օ.մ. հպատակութիւնը թողելու՝ փախուստ տուած են և Օ.մ. կառավարութիւնը զանոնք հանած է իր հպատակութենէն։ Գ. կարգին մէջ են անոնք որ, փախուստ տուած են և սակայն Օ.մ. հպատակութենէ հանուած չեն։

Յօդ. 2.—Անոնք որ ըստ օրինի Օ.մ. հպատակութիւնն առանց թողելու փախուստ տուած են օ.մ. հպատակութենէ հանուելէ ետք վերադառնալ ուզած և կըրկին ընդունուած են Օ.մ. հպատակութեանմէջ, այդպիսիներուն փախուստէն առաջ իրենց արձանագրուած կալուածները կառավարութեան կողմէ եթէ «մահ. լիւր» նկատուելով աճուրդի դըրութեամբ ձգտուած են, կառավարութեան պիտի տանան կամ իրենց աճուրդի գինը կանխիկ և կամ այդ կալուածներուն մօտ իրենց ստացուածքին համարժէք անձնակ (խալի) կամ «մահ. լիւր» հող. վերադարձողներն այս երկուքէն մէկը ընտրելու մէջ ազատ են։ Մէկու մը՝ «մահ. լիւր» նկատուելով ձգտուած կալուածին համարժէք ուրիշ կալուած մը տալու համար կ'աւելի կ'աւելնի նախկին կալուածին արդի գինը՝ սակայն եթէ աճուրդով ձգտուելէ ետք կալուածին վրայ չէնք չի։

նուած կամ ծառ տնկուած ըլլայ այս յաւելումը նկատի չառնուիր գնահատումի միջոցին։

Յօդ. 3.—Եթէ օտար երկիր փախուցի մը կալուածը ժառանգութեան մը հետեւանքով իր ժառանգորդներուն փոխանցուած է, կառավարութիւնն այդ կալուածին գինը կամ անոր համարժէք ուրիշ կալուած մը չի տար։

Յօդ. 4.—Եթէ Բ. և Գ. կարգի փախուցեալներն իրենց մէկ կալուածը պահանջեն՝ այդ կալուածը տեղւոյն Մէճլիսը Խտարէին որոշումով իր արդի գրաւիչներէն առնուելով կ'տրուի անոնց, պայմանով որ արտասահմանէն վերադարձողները «թափու սէնէտի» ինքնեան իրենց ձեռքը, և կամ եթէ «թափու» չունին, «թափու գաւէմի» մէջ անուննին ալ ձառնագրուած ըլլայ և արդի գրաւիչին ձեռքը «թափու գաւէմի» մէջ գրաւիչին անունն արձանագրուած ըլլայ և արդի գրաւիչներն այդ կալուածին վրայ տուն չինած կամ ծառ տնկած չըլլան, Միայն թէ փախուցեալները փոխուց հարուցումի պահանջը պէտք է ընեն պատկանեալ դատարանին մէջ. իսկ գրաւիչը միշտ իրաւունք կ'ունենայ դատարանին դիմելու. կալուածներուն վրայ եթէ վերոյիշեալ կերպով ու է յաւելում մ'եղած ըլլայ՝ այս յաւելեալ մասին գինը կալուածի գինին հետ նկատի կ'առնուի. եթէ կալուածին գինը աւելի է վրան չինուած չէնքին կամ տնկուած ծառերուն գինէն, այս յօդուածին առաջին մասին տրամադրութեամբ՝ Մէճլիսը Խտարէի որոշումով այդ կալուածն ետ կ'առնուի իր գրաւիչին ձեռքէն և չէնքին ու ծառերուն գինը մաս առ մաս վճարուով սեպականատէրէն գանձուելով՝ կառավարութեան ձեռքով կ'տրուի գրաւիչին։

Եթէ չէնքին ու ծառերուն գինը աւելի է կալուածին գինէն, այն ասան կալուածը կ'մնայ իր գրաւիչին ձեռքն և կալուածին գինը մաս առ մաս վճարմամբ կ'առնուի և կառավարութեան ձեռքով կ'տրուի փախուցեալներուն և կամ 2րդ յօդուածին տրամադրութեամբ այդ կալուածին համարժէք ուրիշ կալուած մը կ'տրուի փախուցեալներին։

Յօդ. 5.—Փախուցեալները եթէ «թափու սէնէտի» ունենալով կամ «թափու» մէջ արձանագրուած ըլլալով՝ իրենց կալուածը պահանջեն և կառավարութիւնը «հազգը գարարով» (հոն հաստատուած ըլլալու իրաւունքով) այդ կալուածին գրաւիչին «թափու սէնէտի» տուած ըլլայ կամ այդ հողերը գաղթականներուն տըրուած ըլլան, այն ատեն կամ այդ կալուածին գինը կամ 2րդ յօդուածին տրամադրութեամբ այդ կալուածին մօտ համարժէք կալուած մը կ'տրուի փախուցեալներին. այս

երկուքէն մէկուն ընտրութիւնը փախուցեալներուն թողուած է։

Յօդ. 6.—Փախուցեալները եթէ թափու սէնէտիով կամ «թափու» մէջ արձանագրութիւն ունենալով՝ իրենց մէկ կալուածը աճուրդով ձգտուած ըլլայ, ըստ 2րդ յօդուածին՝ կառավարութիւնը անոնց փոխարժէքը կ'ուսուցի։

Յօդ. 7.—Նախորդ յօդուածներուն մէջ յիշուած կալուածի գինն ու համարժէք կալուածը նախ կը գնահատուի կալուածի գնահատիչներուն ձեռքով և եթէ փախուցեալները կողմէ առաւելութիւն ըլլայ, տեղւոյն Խտարէի ժողովը երկրորդ անգամ կ'քննէ զայն։

Յօդ. 8.—Եթէ փախուցեալներն առանց «թափու սէնէտի» կամ «թափու» մէջ արձանագրութիւն ունենալու իրենց մէկ կալուածը պահանջեն, գրաւիչներուն ձեռքէն այդ կալուածն ետ չառնուիր, այլ անոնց (փախուցեալներուն) կ'ձանուցուի թէ՛ կըրնան դիմել պատկանեալ դատարանին։

Յօդ. 9.—Եթէ փախուցեալներն մը ըստ վերոյիշեալ յօդուածներու Մէճլիսը Խտարէին կամ դատարանին դիմէ, կանխիկ կերպով վճարուելիք ծախքերը կ'յետաձգուին և Խտարէի ժողովին կամ դատարանին վճարին գործադրութեան միջոցին կ'առնուին։

Յօդ. 10.—Փախուցեալները այս օրէնքին հրատարակութեան թուականէն մինչև 3 տարի միայն կրնան օգտուիլ այս օրէնքին տըրամադրութենէն, անկէ ետք ու է դիմում նկատի չառնուիր։

Յօդ. 11.—Այս օրէնքը պիտի գործադրուի ներքին գործոց և դատական նախարարութեան կողմէ։

### ԱՂՔԱՏԱԽՆԱՄԻ

ՀԱՆԳԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Նախորդ թիւին գումարը 162 ֆր. Մերոն Մաքսուտեան Աւետիս Զարպ հանգիւն հրանդ վրդանէսեան Տէր-մէնեան եղբ. Նշան հանգիւն կառապետ Սաղիան էքսէրճեան կղարք Յակոբ Էլվանեան Մինաս Մամիկոնեան Յարութիւն Գրիգորեան երկուս կան ֆր. Խաչիկ Արզոեան 1.50 Միքայէլ Թէրզեան Օննիկ Յակոբեան Տիրան Տէօփէթեան Միհրան Կուսուդեան Յարութիւն Արապեան Մարտիկ

Նախկին համարը Իւսէին Անդրանիկ Զօրաբեան Թորոս Արթուրեան Միհրան Պալաճեան Յովհաննէս Վարդանեան Տիրան Թաղուորեան Լիւօն Գալէնտեան Ռուփէն Գաղանձեան Յարութիւն Յովհաննէսեան Գալուստ Աւագեան Գաբրիէլ Զօրաբեան Յովհաննէս Պալաճեան Մանուկ Վարդեան Ներսէս Պալիկեան Մանուկ Յարութիւնեան Գառնիկ Պողոս Միշալ Արարամ Մարտիկ Պրիգորեան Սարգիս Յովհաննէսեան Ալէքսան Գալուստեան Միսաք Թուրմէնեան Իրաւիկ Պաղճեան Հրանդ Պէրպէրեան Գաւէթի Յարութիւն Իզար Գալուստեան Թաղուոր Յարութեան Յակոբ Շահպալեան Կարապետ Սուքիասեան Գառնիկ Աւագեան Յակոբ Տէրլաչեան Սիմոն Սամուէլեան Մանուկ Տէմպէլեան Սիրակեան Եղիկեան Արարամ Ամիրեան մէկական ֆրանք։

Գումար 224.50

### ԱԶԳԱՅԻՆ

Ազգ. Երեսփ. ժողովը Ղալաթիոյ խորհրդարանին մէջ վաղը պիտի ունենայ նշանաւոր նիստ մը, ապահովագէտ մեծամասնութիւնը ներկայ պիտի գտնուի. նոյն իսկ ընդդիմութիւնը երբ խումբը չպիտի կրնայ բացակայիլ չը կորսնցնելու համար իր թիկունքը, ուղիծտե հակառակ պայագային յաջորդաբար՝ առանց օրինական պատճառի չորս նիստէ բացակայած ըլլալուն համար հըրաժարեալ պիտի նկատուին։

Այս նիստին երկու ընդդիմադիր խմբակցութիւններուն ըստուար մեծամասնութեամբ ներկայութիւնը առիթ՝ պիտի տայ բոլոր վճարանութեանց, որոնց հետեւանքը սակայն յոր վարչութեան անաւարակելի ընտրութիւնը պիտի ապահովէ և այդ շնորհիւ Ազգ. Պատրիարքարանը պիտի ըստանայ վարչ. ժողովոց օրինական կողմը, որուն անհրաժեշտ պէտքը չի շտուած է մանաւանդ վերջերս։

—Ս. Թննդեան առթիւ Ազգ. Պատրիարքարան այցելող յոյն պաշտօնական անձնաւորութիւններ չեղած են Պատրիարքարաններու միջև համերաշխ գործակցութեան պէտքին վրայ մեր Պատր. փոխանի դը տարտամ պատասխաններ միայն սուած է, չունենալով պէտք եղած ձեռքահասութիւնը. Յոյն երեւելոյսաններն ալ նոյն առաջարկը ըրած են մերիներուն, բայց «Զհրապ» թուրքերէն անջատ բան մը ըրած չըլլալու փոփոխկատուածութեամբ թուրք երեւելոյսաններ ալ հըրաւիր ու առաջիկայ ըրած է։

### ՏՊԱՐԱՆ ԵՒ ԻՐԱՒՈՒՆԵՔՈՒ

ԿԸ ՏՊԱՐԱՌՈՒՆԻ ՄԱՔՈՒՄ ԵՒ ՏՊԱՌՈՒՄ ԳՐԱԴԱՐԱՆ

Հարսանեկան Հրապարակ, Այցատու, Նամակագրութիւն, Պահարան Պարսաւուրեակ, Հաւուրուրքեր և ուրիշ գործեր

Հայեղեան, Պոլսկարեւել, Թրակսեւել և Ռուսեւել

Մեզ դիմողներու ճաշակին գոհացում տալու համար Տպարանն նոր բերել տուած է ամէնալիւրջին սիստէմի գործիքներ և տառեր

ՅԱՆՁՆԱՐԱՌՈՒԹԻՒՆԸ ԿԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԿԱՆԱԿԱՐԱՌՈՂ ՄԸ

